

ՃՇՋՐՏՈՒՆԵՐ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԵՐԻ
ԸՆԹԵՐՑՈՒՆԵՐՈՒՄ ԵՎ ՍԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. iziduše գոյականը և iziduni բայը

Միևնույն izid- արմատով կազմված այս բառերից iziduše գոյականը ըստ էության հստակ ենթադրվում է Արգիշտի II-ի Հադիի և Չելերի-բադիի իդեմտիկ արձանագրություններում: Սակայն ուրարտական գրագրի անփութության պատճառով մասնագիտական գրականության մեջ դրանք փաստորեն երկու դեպքում էլ թյուրիմացաբար մատուցված և դիտարկված են iziduni բայական գրությամբ: Ահա այդ տեքստերը.

1. ...KI^{MEŠ} qu-ul-di-i-ni ma-a-nu ú-i gi-e-i ab-si-e-[i G]ÁN^{GIŠ ŠAMŠE}
^{GIŠ} GĒSTIN ša-a-r[i i]s-ti-ni ma-nu-ri ú-i P[A₅ i]š-ti-ni a-ga-a-ú-r[i šú]-
 ú-ki^d i' al-di-se i-zi-du-n[i] (?) a-ru-me^d i' al-di-se (?) za-du-ú-b[i š]u-e
 a-su-a-• i-i-n[a]... (KYKH, 406, երեսի կողմ, տողեր 38-45)
2. ...KI^{MEŠ} qu-ul-di-ni ma-nu ú-i gi-i ab-si-i GÁN^{ŠAMŠE} ul-di ša-a-ri iš-
 ti-ni ma-nu-ri ú-i PA₅ iš-ti-ni a-ga-ú-ri šú-ú-ki^d i' al-di-i-se i-zi-du-ni
 (?) a-ru-me^d i' al-di-se (?) za-du-bi i-ni šu-e a-su-a-• i-na... (KYKH,
 407, երեսի կողմ, տողեր 28-33)

Այժմ անդրադառնանք գրագրի մատուցած խեղաթյուրումներին և մասնագիտական գրականության մեջ տեղ գտած տարակարծություններին:

Գ.Ա. Սելիքիշվիլին, օրինակ, KYKH, 406 արձանագրության iziduni-ի մասամբ տուժած ու[i] վերջավորության փոխարեն, ըստ երևույթին, ելնելով կոմտեքստի թելադրանքից, լիովին վերականգնել է se: Ուստի իր առաջարկած izidu[se]-ն, բնականաբար համարել գոյական¹: Ի դեպ Հադիի և Չելերի-բադիի իդեմտիկ արձանագրությունների բայական տեքստով iziduni-ն «երախանգ» գոյական է համարում մաս Ե. Հ. Գրեկյանը՝ այնինչ առանց անդրադառնալու ուրարտական գրագրի խեղաթյուրմանը: Իսկ Ֆ.Վ. Զյոնիզը, չզիտես ինչու, երկու դեպքում էլ գրագրի կողմից թյուրիմացաբար բայ մատուցված, սակայն ըստ էության գոյական ենթադրվող, iziduni-ն, միանշանակ բայ՝ Verb է համարում²:

Այստեղ մաս ավելացնենք, որ վերոհիշյալ երկու տեքստերում iziduše գոյականի փոխարեն iziduni բայի անհարկի մատուցումը, ցավոք, ուրարտական գրագրի կողմից մատուցված միակ կոպիտ սայթաքումը չէ: Տեքստի šuki^d i' aldiše iziduni (?) aru-me^d i' aldiše (?) zadubi šue asua• ma... մատուցման պարագայում ստացվում է, որ Խադիի կարգադրությունը՝ iziduše-ն իբր թե պետք է կատարի հենց ինքը՝ գերագույն աստվածը: Այ-

մինչ, ^dի aldise iziduse (!) aru-me «Խալդին կարգադրություն արեց-ինձ» տեքստի համաձայն, սոսկ կարգադրողն է գերագույն աստվածը, իսկ կատարողը ուրարտական թագավորն է: Ուստի ինքնին հասկանալի է, որ ^dի aldise zadubi-ի փոխարեն անկասկած պետք է լինի iese zadubi «ես կատարեցի»: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ տողերիս հեղինակը արդեն նկատել և շտկել է այն: Հմմտ. Ռուսա II-ի Արծկեի KYKH, 427a արձանագրության իդենտիկ տեքստը, suki ^dի aldise iziduni iese zadubi «Հենց Խալդի աստվածը կարգադրեց, ես կատարեցի»⁴:

Հետևաբար, ելնելով Արզիշտի II-ի Հաղիի KYKH, 406 և Չելերի-բաղիի KYKH, 407 իդենտիկ արձանագրությունների վերոհիշյալ հատվածների խեղաթյուրումներից, ստորև բերում ենք նրանց հավաստի նոր ընթերցումները և թարգմանությունները.

1. ...KI^{MEŠ} qu-ul-di-i-ni ma-a-nu ú-i gi-e-i ab-si-e-[i] GJÁN ^{GIS}ŠAMŠE ^{GIS}GESTIN ša-a-r[i] i]š-ti-ni ma-nu-ri ú-i P[A, i]š-ti-ni a-ga-a-ú-r[i] sù-ú-ki ^dի al-di-se i-zi-du-š[e] (!) a-ru-me i-e-se (!) za-du-ú-b[i] §ju-e a-su-a-• r-n[a]... (KYKH, 406, երեսի կողմ, տողեր 38-45)

Հողը ամայի է եղել. ոչինչ երբեք (?) ցանքադաշտ, խաղողի (ու) պտղատու այգի այստեղ չի եղել, ոչ էլ ջրանցք է այստեղ անցկացվել: Հենց Խալդի-աստվածը կարգադրություն (!) արեց-ինձ, ես (!) ստեղծեցի ծով արհեստական:

2. ...KI^{MEŠ} qu-ul-di-ni ma-nu ú-i gi-i ab-si-i GÁN ^{ŠAMŠE} ul-di ša-a-ri iš-ti-ni ma-nu-ri ú-i PA, is-ti-ni a-ga-ú-ri sù-ú-ki ^dի al-di-i-še i-zi-du-še (!) a-ru-me i-e-še (!) za-du-bi i-ni §u-e a-su-a-• r-na... (KYKH, 407, երեսի կողմ, տողեր 28-33)

Հողը ամայի է եղել. ոչինչ երբեք (?), ցանքադաշտ, խաղողի (ու) պտղատու այգի այստեղ չի եղել, ոչ էլ ջրանցք է այստեղ անցկացվել: Հենց Խալդի-աստվածը կարգադրություն (!) արեց-ինձ, ես (!) ստեղծեցի այս ծովը արհեստական:

Հետևաբար, հետազոտված իդենտիկ տեքստերից հստակ երևում է, որ գրագրի կողմից խեղաթյուրված ^dի aldise iziduni (?) aru-me հատվածի կողք-կողքի հիշատակված «կարգադրեց» (?) խեղաթյուրված և «տվեց-ինձ» իրական բայերից ամենևին չի նշմարվում, թե ի՞նչ է, արդյոք, միաժամանակ կարգադրել (?) և տվել ուրարտական թագավորին գերագույն աստված Խալդին: Մակայն կարծեցյալ iziduni (?) -ի շտկված iziduše (?) -ից հետո բացահայտվում է, որ Խալդին պարզապես հրաման է արձակել կամ կարգադրություն արել: Այնպես որ հիշյալ մախադասության ստորոգյալը (բայը) սոսկ aruni-ն է, իսկ շտկված iziduse(!)-ն՝ «կարգադրություն» գոյականը: Հմմտ. "ի aldise iziduše (!) aru-me «Խալդին կարգադրություն (!) արեց-ինձ» (KYKH, 406, երեսի կողմ, տողեր 43-44 և 407, երեսի կողմ, տողեր 31-32) և ^dի aldise iziduni «Խալդին կարգադրեց» (KYKH, 427a, տող 3) իդենտիկ տեքստերը:

Ինչ վերաբերում է միևնույն izid- արմատով կազմված izid(u)- քային, ապա այն հիշատակվում է Ռուսա II-ի Արծկեի և Ռուսա III-ի Գյովելեքի նորագյուտ արձանագրություններում՝ մի դեպքում լիակատար i-zi-du-ú-ni, իսկ մյուսում՝ խեղաթյուրված i-zi-ú-ni մատուցումներով՝ զրագրի մեղքով du նշանի անտեսումով: Կարծում ենք, որ խեղաթյուրման մասին վկայում են izid- արմատով միանշանակ կազմված վերոհիշյալ iziduAe գոյականի, ինչպես նաև iziduni քայի ստորև բերվող հիշատակությունները.

I. ^mRu-sa-a-se ^mAr-gis-te-• i-ni-se i-ni ^Ea-si-• u-si-e za-du-ni qar-bi-e sù-li ma-nu ú-i a-i-se-e-i LUGAL-se za-da-la-ni sù-ki ^di al-di-i-se i-zi-du-ú-ni i-e-se za-du-bi (KYKH, 427a, տողեր 1-3)
Ռուսան, Արգիշտիի որդին, այս (տունը) զոհաբերության՝ պատրաստեց: Ժայռը լքված է եղել, երբեք արքաները (այն) չեն կառուցապատել: Հենց խալդի աստվածը կարգադրեց, ես կատարեցի:

2. ^mRu-sa-se ^mE-ri-me-na-• i-ni-se a-li ^{KUR}Qi-il-ba-ni-ka-i KI^{TEM} qu-ul-di-ni ma-nu ú-i gi-e-i [ab-si-e-i GÁN ^(18.SAM)SE] ma-nu-r[i ú-i PA₅ is-ti-ni] a-ga-ú-ri sù-ki [^di al-di-se] i-zi-<du!>-ú-ni i-e-s[e PA₅ a-gu-bi] DAN.NU^{MEŠ} ar-ni-ú-[si-ni-li za-du-bi i]s-ti-ni (SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 117, տողեր 18-26)

Ռուսան, Էրիմենայի որդին, ասում է, Կիլբանի երկրի դիմացի հողը ամայի է եղել, ոչինչ երբեք, ցանքադաշտ չի եղել, ոչ էլ ջրանցք է այստեղ անցկացվել: Հենց խալդի աստվածը կարգադրեց, ես ջրանցք անցկացրի, հզոր սխրագործություններ կատարեցի այստեղ:

Ի դեպ, iziduse-iziduni-ի մնա՞ն միևնույն արմատով կազմված գոյականների և քայերի առկայությունը ուրարտական սեպագրերում ըստ ամենայնի համատարած և օրինաչափ երևույթ է: Հմմտ. aruse «նվեր» և ar(u) «նվիրել», as• astese «զոհաբերություն» և as• ast(u) «զոհել», «զոհաբերել», biduise «վերադարձ» և bid(u) «վերադառնալ», sidistuše «կառույց» և sidist(u) «կառուցել», zaduše «կատարում», «հրազորում» և zad(u) «կատարել», mese «հարկ» և meš(u) «հարկահանել» և այլն:

Եվ, վերջապես, iziduni քայիմաստի բացահայտման համար յուրահատուկ նշանակություն ունի ubarduduni-ն, որը, Ֆ.Վ. Զյունիզի եզրահանգմամբ, իրոք հանդիսանում է նրա §Synonym-ը: Սակայն ավստրիացի ականավոր ուրարտագետը տվյալ դեպքում անգոչուրեն նկատի է ունեցել Արգիշտի II-ի KYKH, 406 և 407 իդենտիկ արձանագրություններում զրագրի մեղքով բյուրիմացաբար iziduni (?) մատուցված, այնինչ Գ.Ա. Սեյիքիշվիլու ջանքերով իրավամբ iziduse (!) ճշգրտված մույնարմատ գոյականը⁶: Ինչ վերաբերում է իրական iziduni քային, ապա այն գիտությանը հայտնի է մի վտքը ավելի ուշ՝ Ռուսա II-ի KYKH, 427a արձանագրությունից: Ահա iziduni-ին համանիշ ubarduduni քայով օժտված ուրարտական իդենտիկ արձանագրությունների մեզ հետաքրքրող հատվածները.

1. ^mRu-sa-se ^mAr-gis-te-^rni-se a-li qar-bi sal-zi ma-nu ú-i gi-e-i is-ti-ni si-da-ú-ri šú-ki ^d’al-di-še ú-bar-du-du-ni i-e-se si-di-is-tú-bi te-ru-bi ti-ni ^mRu-sa-a-i URU TUR (KYKH, 419, տողեր 3-7)

Ռուսան, Արգիշտիի որդին, ասում է. Ժայռը զահավեժ է եղել, ոչինչ այստեղ չի կառուցվել: Հենց հալդի աստվածը հրամայեց, ես կառուցեցի, դրեցի անունը Ռուսայի քաղաք փոքր:

2. ^mRu-sa-a-se ^mAr-giš-te-^rni-se a-li ^{KUR}Qu-ár-li-ni •ⁿ-bi-i qi-ú-ra-a-ni sù-li-e ma-nu ú-i gi-e-i is-ti-ni ma-nu-r[i] sù-ki ^d’al-di-še ú-bar-du-du-ni i-e-se ini ^{GIS}ul-di-e te-ru-bi ^{GAN}^{GIS}ŠAMŠE ^{GIS}ša-ri sù-^re is-ti-ni te-ru-ú-bi (KYKH, 421, տողեր 5-12)

Ռուսան, Արգիշտիի որդին, ասում է. Կուադլինի հովիտ երկրի հողը անմշակ է եղել, ոչինչ այստեղ չի եղել: Հենց հալդի աստվածը հրամայեց, ես այս խաղողի այգին հիմնեցի, ցանքադաշտ, պտղատու այգի մոր այստեղ հիմնեցի:

2. ^dAniqu դիցանվան և նրա սեռի ճշգրտումը

Ուրարտական իր դիվանի հրատարակության պահին Գ.Ա. Մելիքիշվիլին Անիկու դիցանվան միակ հիշատակությունը Ռուսա II-ի Չվարթնոցի արձանագրության մեջ չի նկատել, այդ պատճառով էլ նրա փոխարեն առաջարկել է DINGIR a-ni-qu gi-e խեղաթյուրված ընթերցումը⁷: Իսկ մի փոքր ավելի ուշ Ֆ.Վ. Զյոնիզը հիշյալ արձանագրության ^dA-ni-qu-gi-e⁹, հետազայում նաև Մ. Սալվինին Ռուսա III-ի Գյովելեքի նորահայտ արձանագրության ^dA-ni-qu-gi⁰ դիցանումը սխալմամբ ընկալել են որպես Անիկուգի: Այնինչ տողերիս հեղինակը, ի տարբերություն Ֆ.Վ. Զյոնիզի և Մ. Սալվինի, ^dAniqugi(e)-ն արդեն մատուցել է որպես Անիկու¹ -gi(e) վերջավորությունը դիտարկելով ուրարտերենի եզակի տրականի հոլովական ցուցիչ¹¹: Իսկ մեր այս տեսակետին համամիտ է Ե.Հ. Գրեկյանը Գյովելեքի արձանագրության իր վերահրատարակության մեջ¹²:

Ինչ վերաբերում է ^dAniqu դիցանվան սեռին, ապա ամկա փաստական նյութի արտակարգ սղության հետևանքով երկար ժամանակ այն շարունակել է մնալ ուրարտագիտության պրոբլեմատիկ խնդիրների շարքում: Դեռ ավելին, ինչպես ներկայումս բացահայտվել է, ամենուրեք սխալմամբ այն կարգվել է աստվածների շարքը: Իսկ վերջերս, ելնելով Ռուսա III-ի Գյովելեքի արձանագրության առաջին հայացքից հակասական թվացող տվյալներից, Մ. Սալվինին հապճեպ այն համարում է մերթ աստված¹³ (dio), մերթ էլ դիցուհի (dea)¹⁴ հաշվի առնելով նրա պատվին և ^{sup}ÁB-կովի, և UDU-ռչխարի գոհաբերությունը¹⁵:

Սույն հակիրճ նախաբանից հետո, կարծում ենք, և Անիկու դիցանվան, և նրա սեռի առթիվ մասնագիտական գրականության մեջ առայժմ արծարծված տեսակետները ինչպես հին, այնպես էլ նորահայտ փաստական նյութի հիման վրա զգալի վերանայման կարիք ունեն: Ի դեպ առաջարկվող նոր եզրահանգումները ընթերցողին ըստ ամենայնի տեսանելի

դարձնելու համար նպատակահարմար ենք գտնում նախօրոք զիտական տառադարձմամբ մատուցել այստեղ հենց խնդրո առարկա Ջվարթնոցի և Գյովելեքի սեպագիր արձանագրությունների փաստական նյութը՝ հղովական վերջավորությունների ընդգծված տրոհումով.

1. ikuka^ami-e ^mRusaini-e •abi-gi ase pili nikidul[i] UDU.MÁŠ.TUR ^di aldi-e nipsidulini UDU ^di aldi-e TAG UDU ^dIM-a UDU ^dUTU-ni-e se•adie ^dAniqu-gie ase A^{MEŠ} esiašiuili MÁŠ.TUR ^di aldi-e nipsiduli UDU ^di aldi-e TAG UDU ^dIM-a UDU ^dUTU-ni-e se•adi ^dAniq[u] (KYKH, 421, տողեր 16-25):

2. ^mRusase ali guni telzuse terubi ase A^{MEŠ} šuini-ni nikiduli UDU.MÁŠ.TUR ^di aldi-e nipsidulini

GUD ^mRusaini-e DINGIR-gi¹⁴ GUD ÁB ^mRusaini-e ^dNIN GUD ÁB ^dAniqu-gi ... III UDU ^{ŠADU} babana-ue atqanana-ue (SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 117, տողեր 2-3, էջ 122, տողեր 4-5, 9-11, 14-15):

Եվ, այսպես, ներկայացված տեքստերից, կարծում ենք, ակներև է, որ Ջվարթնոցի արձանագրության մեջ եզակի տրականի հղովական վերջավորություններից են ikukani-ի տրոհված e-ն, •abi-ի նույն հղովի տարբերակ gi-ն, ^di aldi-ի e-ն, ինչպես նաև ^dAniqu-ի gie-ն և ^dUTU-ni-ի (^dšaini-ի) e-ն: Այնուհետև, ^dIM-ի a-ն, ^dTeiseba-յի վերջավորությունն է՝ առանց տրականի հղովի ցուցչի, քանի որ ուրարտերենում a-ով ավարտվող բառերը (նաև հատուկ անունները) սովորաբար հղովական վերջավորությամբ չեն օժտվում (հմտ., քերև, ^dIM-a EN-gie «Թեյշեբա աստծուն՝ տիրոջը» - KYKH, 390, տող 1): Իսկ կրկնակի հիշատակության դեպքում ^dAniqu-ի gie հղովական ցուցչի անտեսումը պայմանավորված է տողավերջում ազատ հատվածի բացակայությամբ (տողադարձը, որպես կանոն, սեպագրում բացառված է):

Ինչ վերաբերում է Գյովելեքի արձանագրությանը, ապա այնտեղ «winini-ի վերջին ու-ն եզակի բացառականի ցուցիչն է, ^di aldi-ի և ^mRusaini-ի e-ն, ինչպես նաև DINGIR-ի և ^dAniqu-ի gi-ն՝ եզակի տրականի, իսկ ^{ŠADU} babanaue-ի և atqananaue-ի ue-ն՝ հոգնակի տրականի:

Հետևաբար, ելնելով հիշյալ հիմնավորումներից, ստորև բերում ենք Ջվարթնոցի և Գյովելեքի արձանագրությունների մեզ հետաքրքրող հատվածների թարգմանությունը.

1. Այս Ռուսայան հովտին երբ ջրանցքը nikiduli, ուլ խաղի աստծու (պատվին) թող մորթվի, ոչխար խաղիին գոհաբերվի, ոչխար՝ Թեյշեբային, ոչխար՝ Ծիվինիին, se•adi՝ Անիկուին:
2. Ռուսան ասում է. իսկպես հրաման արձակեցի. երբ ջրերը ծովից հոսեն, ուլ խաղի աստծո (պատվին) թող մորթվի, ցուլ՝ Ռուսայան աստծուն, կով՝ Ռուսայան դիցուհ(ուն), կով՝ Անիկուին, III ոչխար՝ լեռնային գոհաբերություններին:

Ահա այսքանը, Անիկու (բայց ոչ Անիկուզի՝ ըստ Ֆ.Վ. Զյոնիզի և Մ.

Սալվինիի) դիցանվան, կարծում ենք համոզիչ, հորջորջման մասին: Հմտ., քերև, մակ մման վերջավորությամբ ուրարտական Isriliuqu անձնանունը և Buqu, Gurqu, eulqu տեղանունները:

Ինչ վերաբերում է Անիկուի սեռի բացահայտմանը, ապա, ճիշտ է, անցյալում, փաստական նյութի բացակայության պարագայում, մասնագիտական գրականության մեջ այն համարվել է աստված: Սակայն այժմ հենց սոսկ Ռուսա III-ի Գյովելեքի մորահայտ արձանագրության տվյալների համաձայն, երբ Անիկուին գոհաբերվում է ^{sup} AB «կով», այլևս ոչ մի կասկած չի հարուցում, որ նրան միանշանակ պետք է դասել ուրարտական դիցուհիների շարքը: Հանրահայտ է, որ պաշտամունքային արարողությունների ժամանակ ^{and} AB-կովը գոհաբերվում է բացառապես դիցուհիների պատվին՝ սկսած գերագույն դիցուհի Վարուբանիից:

Սյուս կողմից, ակնառու է մակ որոշ դեպքերում դիցուհիների, այդ թվում առաջին հերթին Վարուբանիի, պատվին ^{sup} AB-կովի հետ միասին մակ ոչխարների գոհաբերումը: Այդպիսին է իրերի վիճակը, օրինակ, Վարուբանիի. Բաբայի ու Տուշպուեայի պարագայում Մեների դռան պաշտամունքային արձանագրության դիցարանում¹⁵: Դեռ ավելին, բացառիկ դեպքերում էլ ուրարտական դիցուհիների, ներառյալ Վարուբանիի, պատվին գոհաբերվում են սոսկ ոչխարներ (կովերի ամոռնումով)¹⁶: Սակայն դրանից, միևնույն է, իրերի վիճակը ամենևին չի փոխվում:

Հետևաբար, մորագյուտ սեպագիր արձանագրությունների փաստական նյութի շնորհիվ ներկայումս ուրարտական աստվածների սակավաթիվ դիցարանը աստիճանաբար համարվում է մոր դիցուհիներով՝ հայտնի Անիկուի հետ միասին, մակ առայժմ անհայտ էլոդորում և Ինուանիով: Եվ դա այն դեպքում, որ եթե Անիկուին դասում ենք դիցուհիների շարքը Ջվարթնոցի և Գյովելեքի արձանագրություններում նրա պատվին գոհաբերվող կովերի շնորհիվ, ապա էլոդորում և Ինուանին Այանիսի մորահայտ արձանագրության մեջ մույնպես հանդես են գալիս դիցուհիների շարքում՝ թեև նրանց պատվին գոհաբերվող արդեն ոչխարների պարագայում: Դրան արժե ավելացնել մակ այն ցնցող մորույթը, որ նրանցից Ինուանին միաժամանակ խոսում անում է՝ հենց «դիցուհի» ստուգաբանությամբ, որից սերում են ^{and}inuanaue-ն կամ ^{and}NIN^{mes}-ue-ն¹⁷:

3. se• adi բառի ստուգաբանությունը

Այս բառը ուրարտագիտությանը հայտնի է ավելի քան մեկ հարյուրամյակ առաջ, ըստ որում սոսկ Ռուսա II-ի Ջվարթնոցի արձանագրությունից: Եվ չնայած այդ արձանագրությունը զանազան լեզուներով բազմիցս հրատարակվել է մի շարք երկրներում¹⁸, այնուամենայնիվ se• adi բառի մասին բացահայտումը առայժմ շարունակում է մնալ ուրարտերենի բառապաշարի ծայրահեղ պրոբլեմատիկ խնդիրների շարքում:

Գ.Ա. Մելիքիշվիլին, օրինակ, ուրարտական արձանագրություննե-

րի իր դիվանում խնդրո առարկա բառի մեկնաբանությամբ ընդհանրապես չի անդրադարձել¹⁹։ Ֆ.Վ. Քյունիզը *se•adi*-ի համար ենթադրաբար առաջարկել է "Opfer" «զոհ» քարզմանությունը²⁰։ Իսկ Ի.Մ. Դյակոնովը և Մ.Լ. Խաչիկյանը փորձել են ուրարտերեն *Āe•adi*-ն համադրել խուրրիերեն *se•(a)li*-ի հետ, որը մշանակում է «ծիսականորեն անաղարտ»²¹։ Սակայն այդ ամենը սոսկ հիպոթեզներ են, որոնք սեպագիր տեքստում առանձին վստահություն չեն ներշնչում։

Սույն հակիրճ նախաբանից հետո նշենք, որ չնայած *se•adi* բառը հիշատակվում է սոսկ Չվարթնոցի KYKH, 421 արձանագրության մեջ, սակայն մեր ուշադրությունը ակամայից գրավում է վոդուց հայտնի սեպագիր այդ տեքստի և Գյովելեքի նորահայտ սեպագիր արձանագրության իդենտիկ հատվածների, մասնավորապես նրանցում առկա *se•adi* ^{GUD} *ĀB* 'Aniqu-gi դարձվածքների փոխադարձ կապը։ Ուստի խնդրո առարկա հարցի էությունը ընթերցողին առավել տեսանելի դարձնելու համար նպատակահարմար ենք զտնույն առաջին հերթին ստորև բերելու հիշյալ սեպագիր տեքստերի մեզ հետաքրքրող իդենտիկ հատվածների գիտական տառադարձումը և քարզմանությունը՝ զոհաբերվող կենդանի – աստվածություն դարձվածքների փոխադարձ շարահյուսական կապի մեջ.

ա) Ռուսա II-ի Չվարթնոցի արձանագրությունը²²

UDU.MĀŠ.TUR ^dīaldie nipsidulini «Ուլ Խալդի աստծո (պատվին) թող մորթվի»

UDU ^uīaldie TAG «Ոչխար Խալդիին զոհաբերվի»

UDU ^dIM-a «Ոչխար՝ Թեյշեբային»

UDU ^dUTU-nie «Ոչխար՝ Շիվինիին»

se•adi ^dAniqu-gi «*se•adi*՝ Անիկու դիցուհուն»

UDU.MĀŠ.TUR ^dīaldie nipsiduli «Ուլ Խալդի աստծո (պատվին) թող մորթվի»

UDU ^dīaldie TAG «Ոչխար Խալդիին զոհաբերվի»

UDU ^dIM-a «Ոչխար՝ Թեյշեբային»

UDU ^dUTU-nie «Ոչխար՝ Շիվինիին»

se•adi ^dAniq[u] «*Āe•adi*՝ Անիկու(ին)»

բ) Ռուսա III-ի Գյովելեքի արձանագրությունը²³

UDU.MĀŠ.TUR ^dīaldie nipsidulini «Ուլ Խալդի աստծո (պատվին) թող մորթվի»

GUD V UDU ^dīaldie TAG «Յուլ (և) Տ ոչխար Խալդիին զոհաբերվի»

UDU.ŠE UDU ^dIM «Ոչխար գեր (և) ոչխար՝ Թեյշեբային»

UDU.ŠE UDU^dUTU «Ոչխար գեր (և) ոչխար՝ Շիվինի(ին)»
 UDU.SE UDU^dArubanie «Ոչխար գեր (և) ոչխար՝ Վարուբանիին»
 UDU.ŠE UDU DINGIR^{MEŠ} «Ոչխար գեր (և) ոչխար՝ աստվածներ(ին)»
 UDU.ŠE UDU^dNIN «Ոչխար գեր (և) ոչխար՝ դիցուհի(ներին)»
 GUD[»]Rusainie DINGIR-gi «Յուլ՝ Ռուսայան աստծուն»
 GUD[»]AB[»]Rusainie^dNIN «Կով՝ Ռուսայան դիցուհի(ուն)»
 GUD[»]AB^dAniqu-gi «Կով՝ Անիկու դիցուհուն»

Այսպիսով, ինչպես հստակ երևում է հիշատակված տեքստերի գիտական տառադարձումներից և թարգմանություններից, Գյովելեքի արձանագրության մեջ ըստ ամենայնի պարզ են՝ և աստվածությունները և նրանց հասցեագրված զոհաբերվող կենդանիների տեսականին: Ինչ վերաբերում է Չվարթնոցի արձանագրությանը, ապա այստեղ միակ բացառությունը հանդիսանում է զոհաբերվող կենդանիների շարքում առկա *še•adi* ուրարտական անհայտ բառը, որը առնչվում է ^dAniqu դիցանվան հետ: Եվ դա այն դեպքում, երբ Չվարթնոցի արձանագրության *še•adi* ^dAniqu-gi դարձվածքի դիմաց Գյովելեքի արձանագրության իդենտիկ տեքստում առկա է GUD[»]AB[»] ^dAniqu-gi «կով՝ Անիկու դիցուհուն» դարձվածքը: Ըստ որում հատկանշական է, որ GUD[»]AB^dAniqu-gi և *še•adi* ^dAniqu-gi դարձվածքները համընկնում են ոչ միայն ըստ էության, այլև շարահյուսորեն: Այստեղ սոսկ ավելացնենք, որ Չվարթնոցի արձանագրության *še•adie*-ի -e վերջավորությունը (հմմտ. 25-րդ տողի *še•adi*-ն) ունի սոսկ զրաֆիկ նշանակություն՝ տողի ազատ հատվածը լրացնելու համար (հմմտ. մասնում տողի ^dAniqu-gie-ի ավելորդ -e-ն՝ ^dAniqu-gi-ի փոխարեն):

Հետևաբար, սույն GUD[»]AB – *še•adi* «կով» ըստ ամենայնի հետաքրքիր բացահայտումը, ավելի քան հարյուրամյա անհայտությունից հետո, ամերիկա լրացնում է ուրարտական արձանագրությունների առայժմ հայտնի GUD – *pa•ni* «ցուլ», UDU – *suše* «ոչխար», ANSU.A.AB.BA – *ulṭuni* «ուղտ»²⁴, UDU.MÁŠ-li – *niqali* «այծ» և UDU.MÁŠ.TUR – *salī* «ուլ»²⁵ շումերա-ուրարտական համադրությունների շարքը:

NICOLAY HARUTYUNYAN

CORRECTIONS AND INTERPRETATIONS IN THE READINGS OF URARTIAN TEXTS

The paper observes and gives precise readings and meanings of Urartian noun *iziduše* 'order', and the verb *iziduni* 'to order', the name and genus of divinity Aniqu and the etymology of the word *še•adi* 'cow'.

1. Գ.Ա. Меликишвили, УКН, 276, երեսի կողմ, սող 43 և ծնր. 11:
2. Ե.Հ. Գրեկյան, Գլոգլիերի ուրարտական արձանագրությունը, ՊԲՀ. 2004, թիվ 1, էջ 235:
3. F.W. König, Hehl, II, էջ 156 և ծնր. 9: Հմմտ. Н.В. Арутюнян, КУКН, էջ 463:
4. Н.В. Арутюнян, КУКН, էջ 316, ծնր. 40ա:
5. F.W. König, Hehl, II, էջ 156 և ծնր. 9, ինչպես մաև էջ 189:
6. Գ.Ա. Меликишвили, ВДИ, 1953, № 1, էջ 225; 1954. № 1, էջ 208:
7. Sbu КУКН, էջ 359 այդ արձանագրությանը վերաբերող զրականությունը:
8. Գ.Ա. Меликишвили, УКН, 281, սողեր 21, 25, ինչպես մաև էջ 359:
9. F.W. König, Hehl, II, էջ 157, 172:
10. M. Salvini, SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 123:
11. Н.В. Арутюнян, КУКН, 421, սող 21 և ծնր. 12:
12. Ե.Հ. Գրեկյան, ՊԲՀ. 2004, թիվ 1, էջ 244 և ծնր. 112:
13. Մ. Սալվինիի մոտ՝ ⁴GI, իսկ Ե.Հ. Գրեկյանի մոտ՝ ⁴GI/DINGIR-gi.
14. Հմմտ. M. Salvini, SMEA, XLIV/1, էջ 123:
15. КУКН, 38, տերստ I, սող 21; 107, հակ. կողմ, սող 29; M. Salvini, Ayans I, էջ 254. սեկցիա II, սող 1-2; էջ 258, սեկցիա V, սող 7:
16. M. Salvini. Ayans I, էջ 254, սեկցիա II, սողեր 1-2:
17. Н.В. Арутюнян, Новые наблюдения в лексике урартского языка, §Эдубба вечна и постоянна», Санкт-Петербург, 2005, էջ 13-16:
18. Խաչիկ Գալանյան, «Արարատ», 1900, էջ 380: K. Basmadjian, "Recueil de travaux relatifs a la philology egyptiennes et assyriennes", XXIII, Paris, 1901. Б.С. Голенищев, ЗВО, XIII, вып. 4, 1901, էջ 686-692. A. Sayce, JRAS, LXXXVI. 1901 և այլն:
19. Գ.Ա. Меликишвили, УКН, 281 և էջ 406:
20. F.W. König, Hehl, II, էջ 126, սողեր 21, 23 և էջ 201: Հմմտ. КУКН, 421.
21. I.M. Diakonoff, HU, էջ 32, ծնր. 25. М.Л. Хачикян, ХУ, էջ 48, 50:
22. Н.В. Арутюнян, КУКН, 421, սողեր 18-25:
23. M. Salvini, SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 122, հակ. կողմ, սողեր 4-11; Ե.Հ. Գրեկյան, ՊԲՀ, 2004, թիվ 1, էջ 225:
24. Գր. Ղափանցյան, Արարատի պատմությունը, Երևան, 1940, էջ 53:
25. N. Harouthiounyan, New Relations and Interpretations in Urartian texts, "Studie Linguarum", 3/1, Moscow, 2002, էջ 207-208:

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ

ՊԲՀ – Պատմա-քանակադրական հանդես (Երևան):

ВДИ – Вестник древней истории (Москва).

ЗВО – Записи восточного отделения Русского археологического общества (Москва).

КУКН – Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

УКН – Գ.Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960.

ХУ – М.Л. Хачикян, Хурритский и урартский языки, Ереван, 1985.

Ayans, I – A. Çilingiroglu, M. Salvini, Ayans I, Roma, 2001.

HU – I.M. Diakonoff, Hurrisch und urartisch, München, 1971.

Hehl – F.W. König. Handbuch der chaldischen Inschriften, I-II, Graz, 1955-1957.

JRAS – Journal of the Royal Asiatic Society (London).

SMEA – Studi Micenei ed Egeo-Anatolici (Roma).